**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

---

Թիվ 5/127
«02» XII 2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2014թվականի օգոստոս ամսվա արձակված կարգադրությունները և ընդունված որոշումը:

Առդիր «3» թերթից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

,, 3 , նոյեմբերի 2014թ.. N 14-Ա

## ԱՆԱՀԻՏ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ <<ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղական համայնքի ավագանու 2014թվականի հուլիսի 24-ի N 22-Ա և համայնքի ղեկավարի 2014թվականի հուլիսի 21-ի N65-Ա որոշումները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Անահիտ Տեր-Հարությունյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի «Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնից նշանակել <<Առողջության կենտրոն>> համանքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ֆ. Մարգարյան

2014թվականի նոյեմբերի 3

Գ. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

„ 03„ նոյեմբերի 2014թ..                                        N 13-Ա

## ՀԵՂԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հեղինե Հարությունյանին հանձնված 2014թվականի հոկտեմբերի 16-ի ծանուցումը՝ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ:

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի նոյեմբերի 3-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի «Արմավիրի մանկապարտեզ» ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Հեղինե Հարությունյանի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարանի առաջատար մասնագետ՝ Ալավերդի Կարապետյանին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ::
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**Համայնքի ղեկավար՝**                    **Ռ. Ֆ. Մարգարյան**

2014թվականի նոյեմբերի 03

Գ. Արմավիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» նոյեմբերի 2013 թվականի N 88-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-իներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի`ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ`

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ` Եղսան Կարապետի Ասատրյանին, ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր 063-018/տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 7 փողոցի թիվ 9 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում`պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար`** **Ռ.Ֆ.Մարգարյան**

2013 թվականի նոյեմբերի 19
գ.Արմավիր